

ՎԱՀՀԱԳՆ

ԽԱՎԱՐԻՑ ԱՐԵՎ


Իմ առաջին գիրքը, որպես շնորհակալություն նվիրում եմ
մայրիկիս՝ ինձ գրել, կարդալ և նկարել սովորեցնելու համար:

Հեղինակ՝
ԱՐՄԵՆ ԲԱԼԱԲԱՆՅԱՆ

© Armen Balabanyan, 2025

ԽԱՎԱՐՈՒՄ

Լինում է, չի լինում:
Վերևում երկինք չի լինում:
Ներքևում գետին չի լինում:
Լինում է Անապին արուն առաջնածին,
Ում մասին դու շատ պատումներ գիտես
Եվ Տիման է լինում՝ էգն ամենածին
Քաոսի մասին դեռ պիտի խորհես,
Իրար խառնված ջրեր լինում են,
Բայց չի երևում հետքը ցամաքի:
Արտեր չեն լինում չի լինում ցորեն,
Կերպը չի լինում անգամ եղեգի
Ոչինչ չի լինում արարված, կերտված,
Ո՛չ էլ անվանված կամ նշանակված:



Հենց այս ժամանակ շատ խորը խորքում՝
Ծնունդ են առնում Արան ու Անան
Հասունանում են այդ թանձր մեգում,
Դնելով սկիզբը այս պատմության:
Անցնում են օրեր, ամիսներ բազում,
Սրանք բազմանում, հաջորդն է ծնվում,
Անցնում են օրեր, տարիներ բազում,
Շատ են շատանում, ու ավելանում:
Ու էսպես հերթով, իրար ծնելով,
Տարածվում են ու արմատանում,
Եվ սրանց միջին այս հերթափոխում
Մի արևային մանուկ է ծնվում՝
Ապրում են սրանք ու կյանք են անում
Էս խորը խորքում, հեռու ընդերքում…

Եվ Տիմա մայրը իր որովայնում
Աննաանձ դղրդյուն, աղմուկ է լսում
Վազվզում են, դեսուդեն անում,
Տիմա մոր որովայնը տատանում:
Շփոթվել են Տիման ու Անափը,
Խռովել է աղմուկը, նրանց խաղաղ կյանքը:
Անափը կարծեց որ գտավ ելքը,
Բայց այս հարցի մեջ մեծ էր իր մեղքը.
-Ինձ զայրացնում են սրանց արարքները,
Կորցրել եմ հանգիստս, գիշերս, ցերեկս,
Պիտի ավերեմ ես սրանց գործերը,
Որ գտնեմ հանգիստս, որ լռեն ձայները:
Հենց որ Տիման լսեց այս խոսքերը,
Չարությամբ լցվեց մարմինը նրա,
Գոռաց կատաղի, ողբաց դառնացած,
Անեծքներ թափեց Անափի վրա.
-Թող այդ նենգ լեզուդ դառնա պատճառը հենց քո վախճանի,

ԻնչպեՆ կարող ենք մենք ցանկալ վերջը մեր սկիզբ դրածի,
Ճշմարիտ ես դու նրանք ընտրել են սայթաքուն ուղի,
Բայց պիտ հապաղենք՝ դեռ նրանք երկար հարկ ունեն փորձի:
Դեռ չեր ավարտել իր խոսքը Տիման,
Երբ Անափ սուզվեց նրա որովայն,
Գնաց, գործածի մտորումն իր չար,
Մահվան տա նրանց, հանգիստ ապրի հար:
Խորացավ խորքերն անվերջ անդունդի,
Ճեղքեց ու մտավ խավարի մեջ նա
Շոշափեց եզրերը մարմնեղեն նյութի
Ու գտավ խորքում խաժամուժը նա:
Տեսավ շատերին՝ մի մեծ բազմություն՝
Հրճվանքով լցված գետնին են դոփում,
Վազում են անկարգ, աջուձախ անում,
Հարբել են նրանք հաճույքի բովում,
Իրենց նորածին մանուկի պատվին
Մի արքայական հանդես են անում:
Փառքն են երգում մանուկ Վահագնի,
Ով պիտի դառնա զորեղ պատանի
Եվ հետագայում արքա իմաստուն...
Ու ամեն կողմից գոռում են մարդիկ,
Որ արև ծնվեց և լույսն է մոտիկ.
Այս բոց աչքերով մանուկը ահա
Պիտի լույս դառնա խավարի վրա:
Այս բոց աչքերով մանուկը ահա
Մեզ համար պիտի մի մեծ հույս դառնա,
Այս բոց աչքերով մանուկը ահա
Մեր լուսավոր գալիքն է վաղվա:


Էս, որ տեսավ Անափն առաջնածին,
Ջայրույթը նրա պատկվեց հազար,
Բացեց երախը նա իր մոլեգին

Ու ջրեր թքեց ջրեր շատ վարար:
Ու հանկարծահար եղավ ամբոխը,
Միամտաբար խառնվեց իրար
Ու չհասկացավ ինչպես կարող էր
Այս դեպքը լինել այս օրով արդար:
Եվ ամենուրեք խուճապը պատեց
Ջրին մատնվեց ամեն մի պատառ,
Ինչ տեսավ ճամփին սրբեց, վերացրեց
Ամեն գոյ ու դիք իր գիրկը առավ:
Սրբեց, վերացրեց ինչ տեսավ ճամփին
Ոչ մի գութ անգամ չշարժվեց սրտում
Ու իրար ամուր ձուլված միասին՝
Թե մանուկ, թե ծեր կորչում են գնում,
Գոռում են, գոչում շատ աղերսագին
Պարտվողը միշտ էլ դառնում է նսեմ
Տարվում են նրանք այդքան մեղսածին,
Ջրերի վայրագ ալիքների դեմ,
Ու ո՞վ կարող է այս խեղճ, միամիտ
Անունակներին փրկություն դառնալ,
Միթե Վահագնը՝ իր բոց աչքերով
Կարող է գտնել այս հարցին հնար:
Մանուկ է նա դեռ, տակավին մանուկ,
Եվ այդ մանկական միամտությամբ
Նա խաղ է անում ջրերի վրա
Ու մտքով անգամ իր անց չի կացնում,
Որ այս ջրերը մաքրում են, տանում՝
Իր ժողովրդի հավատքը վաղվա…

Ո՜վ դու ստեղծագործ, ստեղծարար արգանդ,
Որ նրանց տվիր արարման տարածք,
Որ նրանց տվիր քեզանից անջատ,
Քո մեջ ապրելու կենսարար մի հող,

Արդյոք չեմ ցավի, որ որդիքը քո
Այսպես անկատար,
Այսպես միամիտ
Հեռանան կյանքից:

Այս անգութ մահվան արարի վրա
Հապաղեց Անափը մի պահ սրտագին,
Բայց գործն այս պիտի իսկույն վերջանա,
Որ հանգիստ ապրի, խաղաղվի հոգին:
Ու բացեց նորից երախը մոլի,
Որ իր վերջնական զայրույթը թքի
Ամբոխի վրա, խառնակիչների:
Ու այդ ժամանակ, բերանից նրա
Դուրս եկավ լեզուն՝ դարձած մի մեծ օձ,
Փաթաթվեց հենց իր կոկորդի վրա,
Լսվեց Անափի խոր շունչ ու հևոց:
Ու սկսեց խեղդել, խեղդել կատաղի
Մոլեգնած օձը՝ կոկորդին գամված,
Հեղձեց Անափին, հասցրեց մահի՝
Ինչպես իր ջրերը խեղդում էին մարդկանց:
Ու Անափ ընկավ, ընկավ վերջնական,
Իր մտքում պահած մի վեհ ցանկություն,
Կամեցածը իր շատ մեծ չեր սակայն
Միայն խաղաղ կյանք ու հանգստություն:
Փրկված ամբոխը այդ պահին վազեց,
Վազեց Անափի դիակի վրա
Ու գազանաբար բզկտել սկսեց,
Պատռտեց անշունչ մարմինը նրա:
Բաժանեց մաս-մաս, ճանաչեց հատ-հատ,
Ամբոխը սկսեց մարմինն անարգել,
Հագեցան գործից անարգ ու վհատ,
Չիմացան էլ, որ մեծ Հորն են սպանել:



Ու հենց այդ պահին, այն նույն մանչուկի,
Անհանց աչքերը անվնաս ու հեզ
Դուրս եկան տեղից ինչպես գունդ հրի,
Միացան իրար, դարձան հրակեզ:
Ու այդ մեծ գնդի ջերմությունից վառ,
Ջրերը ցամքան, դարձան գոլորշի,
Շնորհիվ այդ մանկան հուր ու բոցավառ,
Տարածքներն ավեր եկան հին տեսքի:
Այս անիրական հրաշքը սակայն
Կատարվեց միայն, որ ապացուցի,
Թե այս մանուկն է, որ պիտի դառնա
Այս ժողովրդի հիմքը հավատքի:

Այս ողբերգածին տեսարանն էր, որ
Խռովեց սիրտը չքնաղ Տիմա մոր,
Խոր ցավը պատեց մարմինը նրա
Ու հյուծեց հոգին, ոգին էլ չկա:
Աննյութացել էր կողակիցը իր,
Ստեղծարար ոգին, ում հետ միասին
Կերտեցին նրանք շունչ, մասնիկ ու իր,
Այս խենթ պատմության նրանք սկիզբ դրին:
Գնաց Անափը, հեռացավ ընդմիշտ,
Տիմա մոր սրտում բացեց նա խոր վիշտ:
Միթե կարող էր նա մի բան փոխել...
Միթե հենց նրա անեծքն էր գործել...
Միթե հենց ինքը պատճառը դարձավ Անափի մահվան...
Միթե կարող էր նա մահը ցանկալ իր իսկ ծնածի...
Այս անպատասխան միթենների մեջ
Մթագնեց միտքը չքնաղ Տիմա մոր
Ու զզվանք ապրեց ինքը իրենից,
Որ դարձել էր հենց չարիքի ծնող:

Ինչպես կարող է իր մեջ մեծացնել
Այս անկատարյալ արարածներին,
Որտեղ սխալվեց, որտեղ թերացավ,
Որ այսչափ աղետ բերեց իր մարմնին,
Միայնակ ու լուռ մնաց նա հիմա
Իր որովայնի աղմուկների մեջ.
Այդ խոր ընդերքի արարածներին
Պետք է լռեցնել, աղմուկին տալ վերջ:


և ԿՐԱԿ, և ՋՈՒՐ

Ու հասակ առավ այն հուր աչքերով
Չքնաղ մանուկը՝
Ու դարձավ նա մի զորեղ պատանի,
Կատարյալ կերտվածք մի անկրկնելի,
Արևոտ հայացք արդեն տիրողի:
Ու ժողովուրդը զույգ արևների մեջ տեսավ գալիքը,
Ու հրճվանք ապրեց նրանց դառնացած սիրտը,
Մեծացավ Վահագնը, դարձավ մի հսկա,
Մի աստվածային արարած անբիծ,
Բոլորից հզոր, զորեղ բոլորից,
Իր զույգ աչքերը ամենից հեռուն կարող էին տեսնել,
Իսկ ականջները լսել կարող էին ամեն մի շրշյուն,
Բերանից նրա թռչում էր միայն հոգեթով հնչյուն,
Բայց և կարող էր բարկության պահին հուր կրակ թռչել:
Բարձրահասակ էր՝ բոլորից բարձր,
Կուրծքը՝ լայնալանջ, բազուկը՝ կարծր,
Կայծակներ կարող էր նա նետել հեռուն,
Շարժվել անկաշկանդ մարմնով իր ճկուն:
Գերազանց էր նա բոլոր բոլորից,
Եվ՛ իմաստուն էր, և՛ ամենատես,
Ու դեռ չէր ծնված բացի նրանից
Այսպես կատարյալ երկրորդը իր պես:



Բոլորի միջից ընտրեց հարսնացու
Աննման, չքնաղ, սիրուն Աստղիկին
ՈՒ ընծա տվեց իր սիրտը հուր
Լուսաշող սիրո այդ չքնաղ կույսին:
Ու դեռ չլրացած տասնևութ գարուն
Անափի սպանված դիակի տեղանք՝
Վահագնը շինեց մի մեծ ապարանք,
Սարքեց իր համար գաղտնի ննջարան
Ու դարձրեց այն սուրբ ամուսնության մեհյան:
Պառկեց կնոջ հետ այդ ննջարանում,
Ու տեղաց հեղեղ մի վերերկրային,
Խառնվեց իրար և՛ կրակ, և՛ ջուր
Եվ համորեն սեր տարածեցին,
Երկնքից թափվեց անձրևներ ոսկե,
Սրբեց մարդկային մեղքերը հանուր,
Ամենուր փթթեց, ծաղկեց ամենուր:

Մոռացված, անցած ամեն արհավիրք:
Թե՛ մանուկ, թե՛ ծեր, և բոլոր մարդիկ
Ձայնում էին ուրախ,
Կանչում էին հպարտ անունը քաջի.
-Վահա՜գն արի՝ որդի մեր տղա,
Որդյակ մեր արև, արև դու Աստծո՝
Այս խոր խորքերում ապրում ենք մենք հար,
Այս անդունդի մեջ կենում ենք անլույս...
Ու քոնն ենք այսօր ժողովուրդը այս,
Այս ցեղը հլու, այս ցեղը անզոր,
Պաշտպանի՛ր դու մեզ գալիք և բոլոր արհավիրքներից,
Եղիր մեզ դու հայր, պահապա՛ն եղիր,
Եղիր արժանի ժառանգը դու մեր,
Վահա՜գն արի՝ որդի մեր տղա,
Որդյակ մեր արև: Արև դու Աստծո:



Բայց Տիմա մայրը չէր կարող այսպես
Այս հարցը թողնել,
Ինչքան էլ ցավեր իր որդոց համար,
Պետք էր կողակցի վրեժը հանել.
Լուրջ աշխատանքներ Տիման կատարեց,
Սիրտը քարացրեց ու դարձրեց վեմ,
Մեծ պատուհասներ նա մտաբերեց
Իր փորում ապրող զավակների դեմ:
Հանուն Անափի վրեժխնդրության
Անգութ մի չարիք Տիման ծրագրեց,
Հանուն կողակցի քինախնդրության
Ուժերն իր բոլոր նա համախմբեց:
Մայրն, ով ստեղծողն էր ամեն ամենի,
Արհավիրք ծնեց, օձեր անպարտելի,
Տվեց նա նրանց սպանելու մեծ շնորհ,
Անգութ ժանիքներ, մագիլներ հզոր:
Արյան փոխարեն նրանց մարմինը նա լցրեց թույնով,
Ու հագեցրեց նա վիշապներին մահվան սարսափով:
Ամբողջ մարմինը նրանց նա պատեց անպարտելիությամբ,
Սրտներն օղակեց մորթելու ուժով և խիզախությամբ:
Ով տեսնի նրանց, կընկնի ուժազուրկ,
Ու նրանք ընդմիշտ առաջ կընթանան,
Ու չեն նահանջի՝ ում դեմ էլ ելնեն,
Հանդիպած մարդուն մահ կտան դաժան:
Չարացած Տիման՝ բնությունը մայր,
Կորցրեց վերջնական գութը իր հոգու,
Պատերազմ ցանկաց իր որդոց վրա՝
Չխանայելով իր ուժն ահարկու:
Ու անցավ գործի կատաղած Տիման,
Հրովարտակն իր անդունդ ուղարկեց,
Որ գնան այնտեղ ու կյանքին վերջ տան,
Մաքրեն որովայնն իր ցավից այդ տխեղծ:

ՊԱՏԵՐԱԶՄ

Ու էապես իրար օրերն ուտելով
Անցնում էին, գնում,
Ապրում էին խաղաղ ու կյանք էին անում
Այն խորը խորքում:
Ապրում էին հանգիստ, սրտներում պահած
Իրենց ունեցած հաղթանակը մեծ,
Ու երկրպագում չքնաղ Վահագնին՝
Այդ հզորաշունչ զորեղ պատանուն:
Վահագն օր օրի,ավել ավելի
Զորեղ, կարող, ուժեղ էր դառնում,
Դառնում քաջարի, դառնում ամեհի
ՈՒ աստվածային կերպարանք առնում:
Իր ամենատես աչքիցը սակայն
Ոչինչ չէր կարող աննկատ անցնել:
Այն վրեժը, որ ծրագրել էր Տիման
Իսկույն կարողացավ նա ի հայտ բերել:
Վշտացավ հոգին, դառնացավ սիրտը,
Փորձեց այս հարցից մի հնար անել,
Բայց չգտնելով այս բանի ելքը,
Ստիպված նա եղավ այս դավի մասին
Իր ազգին պատմել.
-Նոր պատերազմ է մեր գլխին գալու,
Չե՛նք կարող այս չար դավից խուսափել,
Բայց սա չեմ ասում, որ դառնանք հլու,
Այլ հակառակը՝ պետք է պայքարել:
Ատելություն է կուտակվել հեռվում՝
Համակված ուժով և լի զայրույթով,
Եվ այն գալիս է, գալիս սպառնալով,
Որ պիտի վերջ տա կյանքին այս երկրում:
Մեր դեմ կելնեն մեծ կատաղությամբ
Հրեշներ, օձեր՝ սուր ատամներով,
Ու հսկա վիշապն իր անգթությամբ

Քաղց կհագեցնի՝ հենց մեր արյունով:
Բայց սա չեմ պատմում, որ վախից դողաք,
Այլ այս ամենին դուք պատրաստ լինեք,
Ինչ էլ, որ լինի, պետք է իմանաք,
Որ ես չեմ թողնի ձեզ մենակ երբեք:


Տագնապը, ինչպես մի մեծ մոլախոտ,
Փաթաթվեց սահուն այս ազգի վրա,
Լցվեց ամենուր մահահոտ անդորր՝
Վա՛յ քեզ, թե վախը ընկերդ դառնա:
Մի երկայնավոր տանջված ծերունի՝
Չորս բոլոր պատված իր իսկ թոռներով,
Միտքը հավաքեց, որ մի խոսք ասի,
Հույս տա այս մարդկանց՝ թեկուզ բառերով:
-Ո՞րն է մեր սխալը՝ մենք չենք հասկանում
Ինչո՞ւ են դաժան միշտ մեզ հետ վարվում,
Միթե մանուկը այս երկրի վրա
Ազատ խաղալու իրավունք չունի,
Միթե այն մայրը, որ ծնի տղա,
Պիտի զոհ դառնա, չարաանենգ մարտի:
Միթե հայրերը պիտ մնան անհույս,
Ռազմի երգերում գտնեն ապավեն,
Միթե հարսները բոլորովին կույս՝
Պիտի սև գույնով իրենց հարդարեն:
-Վահա՛գն, դու ես մեր վրիժառուն՝
Չկա հավասար երկրորդը քո պես,
Դու՛ ես այն հույսը, որ կգա գարուն,
Որ մենք էլ կապրենք գոնե մարդու պես,
Ու քեզ ենք տվել մենք իշխանություն,
Մեր հույսը ամբողջ կապված է քեզ հետ:
Քեզնից սպասում ենք միայն քաջություն,
Քո կողքին կանգնած մենք չենք նայի ետ:

Թող զենքդ լինի դիպուկ, անվրեպ,
Լցված ցասումով այս ժողովրդի,
Ով հավատա ու վստահի քեզ,
Պաշտպանը եղիր դու նրանց կյանքի,
Բայց ով, որ չարիք մտածի քո դեմ,
Կործանիր նրան ամբողջ քո ուժով,
Այս մանուկների ապագան վաղվա
Կկերտվի միայն, միայն քո հույսով:

Ու մի օր հանկարծ խախտվեց ամեն ինչ,
Խավար երկինքը ավելի մթնեց,
Ամենուր լսվեց ահասարսուռ ճիչ.
Օդում թևածող հրեշ հայտնվեց:
Ու իջավ նա վար՝ վայրի սուրոցով
Ու մահի մատնեց, ում որ հանդիպեց,
Ներկեց դաշտերը արյան կարմիրով,
Ոչ մի շունչ էակ աչքից չվրիպեց:
Իջավ ցած, խրեց ճանկերը հողին,
Իրեն տեր ըզգաց այդ տարածքներին,
Քանդեց, ինչ տեսավ իր ճանապարհին,
Հրճվեց տեսիլով բյուր դիակների:
Ով որ հասցրեց, փախավ թաքնվեց,
Պատահմունքից այս քչերը փրկվան,
Այս ժողովուրդը մահվան մատնվեց,
Երևի սա էր սրանց ապագան...
Ու իրենից գոհ, գործը կատարած,
Գնաց ու թիկնեց մի լեռան լանջի,
Իր այս զբաղմունքից նա շատ էր հոգնած՝
Սպանելն այդքան էլ դյուրին բան չի:
Թիկնեց ու հանձնեց իրեն հանգստի,
Որ ուժ հավաքի չար գործի համար,
Ու հենց այդ պահին Վահագնը արի
Լեռան գագաթից ցատկեց դեպի վար,



Շողաց երկնքում սուրը կեծակի
Ու մտավ վիշապի գլուխը խավար:
Ետ քաշեց, հանեց Վահագնը սուրը,
Արյունը ֆշշաց ինչպես շատրվան,
Ու ամենուրեք տարածվեց լուրը
Ավետիսը չար վիշապի մահվան:
Մեր քաջը հազիվ հանգիստ շունչ քաշեց
Ու կարծեց թե՝ վերջ, աղետը անցավ,
Բայց հենց նույն պահին նոր չարիք ծնվեց.
Սպանված վիշապի արյունից կերտվավ
Մի բազմագլուխ կատաղի հիդրա,
Բարձրացրեց նա վեր գլուխներն իր բյուր,
Օձակերպ մարմնից թույներ արձակեց,
Նայեց աջ ու ձախ աչքերով իր սուր,
Բայց և իր զոհին նա չնկատեց:
Ճարպիկ էր Վահագնը՝ մարմնով և խելքով,
Իսկույն հասցրել էր մի լավ թաքնվել,
Իսկ հիդրան դանդաղ իր հազար գլխով
Սկսեց իր զոհին՝ Վահագնին փնտրել:
Ընկավ ճանապարհ ու ճամփին կերավ
Ինչ շունչ, որ նրա ուղուն հանդիպեց,
Արու էր թե էգ կապ չուներ բնավ,
Կարևորը, որ քաղցն իր հագեցրեց:
Տեսավ պատկերն այս Վահագնը մեր քաջ,
Որ իր ժողովուրդը դարձել է լոկ կեր
Այս բազմագլուխ վիշապի առաջ,
Ծնկել են նրանք, մնացել անտեր:
Հավաքեց նա իր ուժերը բոլոր,
Սկսեց փառահեղ ծրագիր կազմել,
Իմաստուն էր նա մտքով փառավոր,
Խելքով կարող էր բոլորին հաղթել:
Ու դուրս եկավ նա թաքստոցից իր խոր,



Մի վարկյան չանցած՝ տաս գլուխ կտրեց,
Ու մինչև հիդրան դանդաղ, հաստափոր
Հասկացավ, որ իր գանգերը կորցրեց,
Վահագնը մեր քաջ իսկույն թաքնվեց։
Ու էսպես ճկուն, մտքով իր զորեղ,
Հերթով, հատ առ հատ գանգերը հատում,
Գործածում էր նա սուր նետ ու աղեղ,
Թվում էր, թե նա պարզ խաղ է խաղում։
Այսպես կրճատեց գանգերը բոլոր,
Անգլուխ թողեց մարմինը նրա,
Ու ընկավ հիդրան շվար ու մոլոր՝
Խաղաղ լույս իջավ այս ազգի վրա։



Ու իրենից գոհ կանգնեց մեր Վահագնը,
Եվ հուր աչքերով նայեց իր չորս դին,
Պետք էր մեծ շուքով նշել հաղթանակը,
Շտապեց, որ տեսնի չքնաղ Աստղիկին։

Գնաց նա արագ, մտավ մեհյանը,
Որ այս լավ լուրով նրա հետ կիսվի,
Բայց դատարկ գտավ նա ատրուշանը՝
Չկար Աստղիկը, չկար սիրելին։
Գոռաց Վահագնը՝ բարկությամբ լցված,
Սա մի կատակ էր՝ շատ անսպասելի,
Ու Տիմա մայրը հաճույքից խնդաց՝
Նա էր հափշտակել մարմինն Աստղիկի։
Ու կնճռոտեց կաշին այս երկրի,
Սերը վերացավ բոլոր կողմերից,
Ամենուր ծլեց տատասկ, փշենի,
Ամեն բան չորցավ անսեր հողմերից։
Մտավ մարդկանց մեջ ուժը չար խոսքի,
Չկամ ոգիներ լույս աշխարհ եկան,
Առաջնորդ դարձավ գումար ու ոսկի,
Բռնեցին նրանք ստելու ճամփան։
Վահագնը կորցրեց գիշեր ու ցերեկ,
Կորցրեց ապրելու ու կյանքի պահանջ,
Վրեժով լցվեց սիրտը սիրուց մերկ,
Փրկություն է պետք, չկա էլ նահանջ։
Եվ ամենից վեր՝ սերն է կարևոր,
Առանց սեր չկա ոչ մի հաղթություն,
Ինչքան էլ լինես ուժի տեր հզոր,
Անսեր չես կարող գործել քաջություն։
Նվազեց ոգին հզոր մեր քաջի՝
Սիրտը փոքրացավ նրա փառավոր,
Ոչ ոք իր մտքում, չի պատկերացնի
Հերոսը ինչպես կդառնա անզոր։
Բարձրացավ նա վեր՝ սարը իր սիրած,
Կանգնեց նա այնտեղ՝ մենակ ու տրտում,
Վշտացած սիրտը բառեր շշնջաց՝
Խոսքեր կուտակված անմեղ իր հոգում.

-Ես սիրում եմ քեզ և ամենից շատ,
Չկա քեզ նման երկրորդը այդպես,
Չգիտեմ ինչո՞ւ և ինչպե՞ս եղավ,
Բայց ես սիրում եմ, սիրում միայն քեզ:
Սիրում եմ մարմինդ՝ այդչափ կատարյալ,
Վերջույթները քո անթերի, անտես,
Ուզում եմ հպվել քեզ մինչև երազ,
Բայց դու շատ հեռու, հեռու ես այնպես:
Ուզում եմ ես զգալ ջերմությունը քո
Ու նուրբ մատներիդ շոյանքը ազդու,
Ուզում եմ սիրես ինձ ամբողջ ցերեկ
Ու գիշերներում մոռանաս ինձ դու:
Ո՞ր ես դու, Աստղի՛կ, երևի հեռվում,
Ու ամեն ազդակ ինձ քեզ է հուշում,
Քո կարիքն ունեմ, դու չես հավատում,
Բայց կյանքն իմ անքեզ թվում է տրտում:
Ինչքան էլ տոնեմ մեծ հաղթանակներ,
Մեկ է՝ քուն գալուց հիշելու եմ քեզ,
Ու այդպես արթուն, գիշեր ու ցերեկ
Սիրտս տանջելու է մի կարոտ ու կեզ:
Ո՞ր ես դու, Աստղի՛կ, որտե՞ղ գտնեմ քեզ,
Որ նորից դառնամ ես ամբողջական,
Ո՞ր ես, որտե՞ղ ես, ո՞ր կողմերում ես,
Արդյո՞ք դավի մեջ մեծ ողբերգական:
Պիտի գտնեմ քեզ, ինչ էլ որ լինի՝
Թեկուզ իմ կյանքը ես մահին մատնեմ,
Այս երկրում նորից պիտի սեր լինի,
Թեկուզ իմ կյանքի մեծ մասը վատնեմ:
Նորից պիտ տեղան անձրևներ ոսկի,
Մարդիկ պիտ միմյանց տան սիրո բարև,
Պիտ շողա լույսը բարի, լավ խոսքի
Այդ ես եմ երդվում՝ Վահագնը Արև:

ЮЭЈПП ЧШЭЬ

Ու այդժամ տեսավ տեսիլ երկնքում
Իր ամենատես աչքերովը այն,
Որ Աստղիկ դաժան գամված է հեռվում՝
Չարացած Տիմա մոր կրծքի վրա լայն:
Վրեժը եռաց սառած իր սրտում,
Պատրաստեց իրեն մեծ մենամարտի,
Տիմա մոր հանդեպ զգաց խոր ցասում,
Իր կյանքի գինն էր մահը Տիմայի:
Պատրաստեց նա իր զենքերը բոլոր,
Բարձրացավ կառքն իր փոթորկով լծված,
Մաքրեց իր սուրը՝ կայծակը զորավոր,
Պատեց ինքն իրեն քամիներով կատաղած:
Աղեղը լարեց, գցեց իր ուսին,
Աջն առավ գուրզը, կապարճը կապեց,
Կրակի լեզու տվեց իր մարմնին,
Իրեն օգնական կայծակներ կարգեց:
Ժողովուրդն իր ընծաներ շնորհեց,
Գահ ու գավազան, շքեղ ծիրանի,
Ու միաբերան ամբոխը գոչեց.
-Վահա՛գն, դու՛ ես արքան բոլորի:
Ելավ Տիրակալն, առաջ ընթացավ,
Դեպի Տիման իր ճամփան ուղղեց,
Անափ եզրերը կառքն իր բարձրացավ,
Գնաց Տիմա մոր դիմացը կանգնեց.
-Այս ինչ հրաշք է պատահել,
Այդ, ո՞ր քամին է քեզ ինձ մոտ բերել,
Լքել, թողել ես սեփական հողեր,
Տիմա մոր վրա բերել ես զենքեր:
Լսեց Վահագնը խոսքը Տիմայի
Ու ավելի շատ սիրտը վրդովվեց,
Բացեց բերանը նա իր կատաղի
Ու այս խոսքերը նրան շպրտեց.

-Արարքներով քո բարձրամիտ
Ինքդ ես ինձ հրավերք հղել,
Երևի այդպես միամիտ
Ցանկանում ես մեր կյանքը խլել:
Զավակներն էին աղմկում,
Նրանց հայրը վրդովվեց,
Նրանց տվեց մահ, ցասում,
Խղճաց մայրը, գութ տածեց:
Հետո դարձավ խելագար,
Կորստից իր կողակցի,
Մայրը ինչպե՞ս կցանկար
Իր ստեղծածը վերացնի:
Ու վիշապներ ուղարկեց
Զավակների կյանքի դեմ,
Բայց և դա էլ չստացվեց՝
Նրանք ապրում են նսեմ:
Եվ երևի քիչ էր դա,
Հետո սերը գողացավ,
Ինչպե՞ս մայրը կցանկա
Զավակներին այսքան ցավ:
Տիման լսեց, հասկացավ
Եվ իր մտքումն այսպիսի
Մի պատասխան հղացավ:
-Դու տեսնում ես ամեն ինչ,
Կատարյալ է քո միտքը,
Բայց ամբոխում մեկն ես քիչ,
Չի խաղաղվում իմ սիրտը:
-Լսի՛ր, Մա՛յր դու բնություն,
Ինչպե՞ս կարող էիր կարծել,
Որ քո փորձը ծնության
Պիտի այդպես հարթ անցներ:
Ու դեռ քանի անգամներ,

Պիտի մեռնեն ու ծնվեն,
Ինչքա՜ն պիտի խմորվեն,
Որ կատարյալ կերպ առնեն:
Դու դեռ երկար պիտ սպասես,-
Ջավակները փոքր են քո,
Պիտի նրանց խնամես,
Որ քո սիրտը լինի գոհ:
Բայց դու միայն պատժում ես
Ու չես թողնում կյանքն ապրեն
Միթե նրանց ծնել ես,
Որ չարչարվեն, տառապեն:
Ճիշտ է անմիտ են նրանք
Ու բռնել են շեղ ուղի,
Բայց դեռ պիտի մեծանան,
Գտնեն իմաստը կյանքի:
Ետ տուր սերը գողացած,
Գնամ ապրեմ իմ երկրում,
Դարձիր դու մայր գթած՝
Ջավակներդ են խնդրում...
Երբ Տիման խոսքերն այս լսեց,
Դիվահար եղավ, միտքը մթագնեց:
-Մնա՛ ինձ մոտ դու, թե ապրել կուզես,
Շա՜տ եմ գնացել ետ դարձի համար,
Այստեղ իմ սրտում քո տեղն ունես,
Բայց եղբայրներիդ սպասվում է խավար:
Վահագն այս խոսքից իսկույն հասկացավ,
Որ չկա էլ ելք հարցից այս դժվար:
-Լսի՛ր Տիմա մայր, իմ խոսքը վերջին,
Ինչքան էլ այն քեզ թվա սրտառուչ,
Բայց ես երդվել եմ լույս տամ իմ ազգին՝
Անգամ թե ընկնեմ ահեղամռունչ:
Ինչպե՞ս կարող եմ ես դավաճանել


Ինձ հավատացող այդ ժողովրդին,
Ախր նրանք են ինձ հերոս դարձրել,
Ու նրանցն է իմ կյանքի ուղին:
Ինչպես կարող է մտքովդ անցնել,
Որ մաս կդառնամ քո նենգ չարիքի,
Ինչո՞ւ եմ այսքան չարի դեմ կռվել՝
Իմ ազգի համա՞ր, թե իմ կարիքի:
Վաղուց իմը չի ընտրությունը իմ,
Երբեք չեմ ապրել ինքս ինձ համար,
Բայց շնորհակալ եմ իմ ճակատագրին,
Հուսամ ծնվել եմ կյանք տալու համար:
Այդ խորը խորքում, հեռու ընդերքում,
Պահում են նրանք սրտերումը հույս,
Որ մութը մի օր կունենա անկում,
Խավարը կանցնի ու կբացվի լույս:
Ա՛խ, դու Տիմա մայր, դու՝ Մայր բնություն,
Պատրա՛ստ եղիր դու ահեղ մի մարտի,
Սիրտս ապրում է հիմա դառնություն,
Բայց թող այս կռվում ազնիվը հաղթի:

Ելան իրար դեմ Վահագն ու Տիման,
Իրար դեմ ելան՝ ահեղ ցասումով,
Զույգ ոսոխներն իրար հանդիման,
Ո՞վ էր նրանց մեջ ճշմարիտը, ո՞վ :
Օդում կուտակվեց ահավոր բախում
Այս բանակների ուժից ախոյան,
Վահագնը զինվեց, դարձավ արնախում,
Օձերով զինվեց բարկացած Տիման:
Վահագնը թշնամուն կայծակներ ուղղեց,
Բայց նրանք անգամ զոհին չհասան,
Հանեց իր գուրզը ու առաջ նետեց,
Դիպավ Տիմային ու քերծեց նրան:

Տիման բարձրացրեց ձեռքը երեսին,
Հասկացավ, որ գուրզը բացել է խոր վերք,
Ինչպես չի սազի սպին կնոջ դեմքին.
Բորբոքվեց, դարձավ էլ ավելի նենգ:
Հրաման տվեց իր օձերին, որ
Հոշոտեն Վահագնի մասերը բոլոր,
Կատաղի իժեր ճանապարհ անցան,
Բայց և այդպես էլ զոհին չհասան:
Նրանց դեմ ուղղեց Վահագնը քամի
Ու ցաքուցրիվ արեց նա նրանց,
Իսկույն նա փորձեց նետ, աղեղ լարի,
Հենց այդ ժամանակ Տիմա մայր գոռաց:
Խլացավ Վահագնն այս խիստ ոռնոցից,
Գլխի մեջ մտավ մի տանջող աղմուկ,
Կորցրեց ուղեղն այս սուր հառաչից
Ու միտքը դարձավ խելագար, դալուկ:
Իր հզոր կառքով առաջ սլացավ,
Հասավ Տիմայի հսկա մարմնի մոտ,
Փորձեց պատճառել մի մահացու ցավ,
Բայց նա չկարցավ, ճանկեց ձեռուտ:
Տիման վերցրեց իր բռունցքի մեջ
Վահագնի մարմինը՝ դիվահար եղած
Ու սկսեց ճզմել նրան մինչև վերջ,
Այսպես հանգչում էր մեր հերոսը քաջ:
Միտքը մթագնած սեղմվում էր նա,
Մահվան հանձնվում Տիմայի ձեռքում,
Այսպիսի հերոսն ինչպես կկարնա
Ունենալ այսչափ անմիտ մի անկում:
Այս տանջանքի մեջ լսեց նա մի ձայն,
Հեռվից Աստղիկն էր փրկության կանչում,
Այս ձայնը կարծես ազդակ էր նրան,
Որ խելքը կորցրած մեռնում է, գնում:

Գիտակցությունը ետ վերադարձավ,
Իր մարմնին տվեց կրակի լեզու,
Տիմայի ձեռքը խանձվեց, չորացավ՝
Վահագնն ազատվեց այս ճանկից ազդու:
Շտապեց, որ հասնի Տիմայի կրծքին,
Ազատություն տա Աստղիկին բանտված,
Բայց չեր մտածում, թե ինչ կտեսնի՝
Աստղիկն ընկած էր արյան մեջ հեղված...
Ու կատաղության խոր հառաչ հանեց,
Լարեց ուժերն ամբողջ իր մարմնի
Ու Տիմայի կողմ կայծակներ հրեց,
Հսկա կայծակներ՝ շատ նման մահի:
Տիման կուլ տվեց կայծակները հաղթ,
Լցվեցին նրանք նրա մարմնի մեջ,
Տարածվեց մարմնում մահանման շանթ,
Ու քաջությունը Տիմային լքեց:
Տիրացավ քաջը Տիմայի մարմնին,
Բարձրացրեց նա վեր իր սուրը կայծակ,
Երկու կես արեց հսկա Տիմային,
Անջատեց նրա մասերն ընդարձակ:
Այդ բաժանումից սուրաց հորդ քամի,
Քշեց ու տարավ՝ ինչ տեսավ ճամփին,
Քշեց ու տարավ մարմինն Աստղիկի,
Քամին չխղճաց անգամ Վահագնին:
Տիմայի մարմնի մասերը կիսված
Քամու հրոցով պոկվան իրարից,
Ու որպես երկու առանձին հատված,
Կանգնեցին իրար դիմաց դիմացի:
Մի կեսից ստեղծվեց մավի մի երկինք,
Մյուս կեսից երկիրն այս առաջացավ,
Դուրս եկավ սիրտը Տիմայի միջից,
Երկու մասերի մեջտեղում կանգնավ:

Լսվեց մի ահեղ, մի հզոր պայթյուն,
Սիրտը տրաքեց՝ ինչպես մի ական,
Եղավ հազար մաս, տարածվեց օդում,
Քար սիրտը նրա եղավ ցիրուցան։
Այս հսկա սրտի պայթյունից հուժկու
Խառնվեց իրար երկինք ու երկիր,
Վեր ելան տեղից ծովերն ահարկու,
Վերացրին ամբողջ սահման ու ծիր։
Երկիրը ամբողջ վերածվեց ծովի,
Ծովից դուրս եկավ կարմիր եղեգնիկ,
Եղեգնի փողից դուրս եկավ մի բոց՝
Ինչպես մի խարտյաշ պատանեկիկ,
Իր հուր մազերով և բոց մորուքով
Սլացավ առաջ, բարձրացավ վերև
Ու մինչև էսօր ամբողջ իր հրով
Երկնքում շողում է Վահագնը Արև։



ԱՐՄԵՆ ԲԱԼԱԲԱՆՅԱՆ

ՎԱՀՀԱԳՆ
ԽԱՎԱՐԻՑ ԱՐԵՎ

Երևան 2025